




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Կ. ԳԱՐՈՒՆԻ

891.542-4

Գ-49

ՄԵՐ ՈՐԵՐԻ ԿՈՋԵՐԸ

ՖԵԼՅԵՏՈՐՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

891.99

Գ-37



ԿԱՍՏ
ԴԱՌՆ

01 JAN 2009
19 NOV 2010

Կ. ԳՅՐԱՌՈՒՆԵՐ

891542-4

9-49

I

Ա. Մ.

ՄԵՐ ՈՐԵՐԻ ԶՈՋԵՐԸ

II

ՄԻ ՈՐՈՎ ՏԱՆՏԻԿԻՆ



13712-57

Կ. ԳԱՐՈՒՆԻ

1.

ՄԵՐ ՈՐԵՐԻ ԶՈՋԵՐԸ

ՅԵՐԱՋ ՄԸ

(Վոր հռաջարանին ե փոխարինում)

Յեղափ, վոր որ մը յերազ տեսա, յերազ մը, վոր այս գրքույկիս լույս ընծայվելուն պատճառ դարձափ: Նստած հողված եյի գրում (յերազումս, արդեն յերազս եմ պատմում) և կուզեյի քիչ մը ձգձգել՝ քանի մը տողավարձ ավելի ստանալու նպատակով, հանկարծ ներս մտավ և զրասեղանիս քով կանգնեց մարդ մը, վոր նույնինքն Հակոբ Պարոնյանն եր: Նա ձեռքին բռնել եր «Ազգային ջոջերը»: Բարե բարեից հետո Պարոնյանը հայտնեց, թե ինքը կուզեր նոր աշխատություն մըն ել գրել, հատկապես մեր որերու «Ջոջերու» վրայոք: Յես անհուն ուրախությունը մը ընդունեցի այդ լուրը և հայտնեցի, վոր մեր քաղաքին մեջ (վոր փոքրիկ գավառական քաղաք մըն ե) ան կրնա ճոխ հավաքածո մը գտնել նման «Ջոջերու», վորոնք իրենց բարեմասնություններով այնքան ալ չեն գիշեր «ազգային ջոջերուն»: Յերեխայիս ճիշդ անժամանակ դարթեցուց ինձ, վորով զրկվեցի Պարոնյանի հետ զրույցս շարունակելու հնարավորություններ: Սակայն վորոշեցի յես ինձմեն գրել «Մեր որերու ջոջերի» մասին, գրել վոչ թե անոնց արտաքինը, այլ նրանց ներքին եյությունը, նրանց ամբողջ հոգեկանը այնպեւ, ինչպես վոր կան նրանք: Յեվ դուք կը գտնեք հոս մեր՝ որերու բարձրացող սոցիալիստական շինարարության ամեն ֆրոնտի վրա «աշխատող» տիպեր («Ջոջեր»), իր մեկ ատամը կոխող շինարարությունից զերազատող վարժապետ, խորհրդային իշխանության դեմ «արդար» վայրույթ բարձրացնող հակա-

խորհրդային տիպեր, կոմպլեկսը դինու շի մեջ վորոնողներ, կոմունիստի դիմակ հագնողներ և այլն: Յես բանաստեղծ չեմ և իմ տիպերն ու անոնց նկարագրությունը յերեւակայական-բանաստեղծական չեն: յես միայն գրչով նկարագրում եմ թղթի վրա այն, ինչ իրենից ներկայացնում ե այս կամ այն տիպը: Իմ տիպերու հարազատ տիպարները, սիրելի ընթերցող, դու կրնաս գտնել ամեն բոլե քո շրջապատում: Ին ուրեմն, սկսենք:

ՄԵՐԱՐԱՆԻ ՀԱՎԱԽՈՐԴԸ

Յերջանիկյանը խորհ. ծառայող մըն ե. դեռ ավելին, հիմնարկության մը վարիչն ե: Կրսեն թե փորձված և իր գործին հմուտ մեկն ե. իր անցյալին ծանոթ չեմ, սակայն ներկան մոտիկեն կը ճանչնամ: Իր բոլոր լավ կողմերուն վրա մեկ «բարեմասնություն» մըն ել ունի. ամեն որ, են քիչը 5-6 ժամ սրճարանում անցկացնելու սովորությունն ե, վորին անշեղ կը հետևի Յերջանիկյանը: Իր հիմնական աշխատանքներուն մեջ գուցե թերանա, բայց սրճարանն որ մը բացակայի կամ բոլե մը ուշանա, այդ ըլլալիք բան չե. քիչ կրսեն այն ատեն դոմինոյի խաղընկերները, վորք կազմ ու պատրաստ Յերջանիկյանին պիտի սպասեն: Յեվ Յերջանիկյանը որացուցային ճշտապահություն մըն որ միևնույն ժամին դոմինոյի քարերուն խաղուցիչ դարկերուն առկ անխնա կը սպանն ժամանակը. հոգ չե թե այդ պահին իր հիմնարկության մեջ անոր բացակայության պատճառով կարգ մը գործեր յերեսի վրա կը մնան. որինա՛լ յենթաշեֆ կոխողեն յեկամ պատգամավորությունը պարապ հետ կը դառնա, կուլտ-կենցաղային հանձնաժողովը կը ցրվի և այսպես կարգ մը բաներ: Սակայն Յերջանիկյանի հոգը չե. այդ բոլորը կարելի՞ յե համեմատել անոր ունեցած շտեմնված հաջողությանը դոմինոյի այսորվա խաղի մեջ: Յեվ այսպես զինքը չճանչցող մը պիտի կարծեր, թե Յերջանիկյանը սր-

նարանի տերն ե, կամ անբաժան մի մասը: Սակայն զարմանալին այն ե, վոր սրճարանին մեջ հալածվող զանազանազույն «հասարակութեան» «քաղաքական» զրույցները բնավ ազդեցութիւն մը չեն զննել Յերջանիկյանի վրա եւ ան աստվածային չեզոքութեամբ մը կուենկնդրե զատարկապորտներու հակախորհրդային, հակակոխողային զրույցները: Յերջանիկյանի սրճարանային բարեմասնութեամբը այնքան տարվեցանք, վոր մոռցանք խոսկլուանոր ուրիշ բարեմասնութեաներու մասին, «բարեմասնութեաններ», վորոնք յերբեք չեն հաշտվիր խորհ. ծառայողի մը կոչումին հետ:

ՄԵՆԲԱՍԵՐԸ

Յերկանյանը մենքասեր ե, այսինքն ըսել կուզեմ ան իր յեսը մենակ չի գովել, այլ միշտ նշանաւոր մարդկանց հետ կը միացնե իր յեսը: Խոսած ատեն շարաշար կը դործածե «մենք» դերանունը. «մենք կարգադրեցինք», «մենք նշանակեցինք», «մենք պաշտոնից հեռացրինք», «մենք... եւ այսպես անվերջ, իր ըսելով բարձրանին պատասխանատու պաշտոն մը» կը վարե, իրեն կոմունիստ կը հայտարարե, թեպետ թեկնածու անգամ ընդունված չե: Անցած որը մեկու մը հավաստեցնել կուզեր, թե տասըորս տարի առաջ ան բոլշեիկներին հետ եր. «մենք, բոլշեիկներս հայտարարեցինք...» մինչդեռ մի գլխի վոր անկյունում խանութ բացած առուտուր կընէր, յերբ բոլշեիկներն արյուն կը թափեյին: Կրսեն թե X... գլուղի գլուղացիներին սպառնալիքի տակ կոխող կազմելու «կը համոզե»։ «Ով վոր կոխող չմտնի, կուլակ եւ հակահեղափոխական կը համարվի ե...» (կրսեն, շատ ըսն կրսեն, բայց յես չեմ համար): Սովորութիւն մը դարձուցած ե վատաբանել այս կամ այն գործչին, թեկուզ սա հասարակական աշխատանքի մեջ կյանքը մաշած լինի: Մինչդեռ ինքը իրեն կատարյալ հեղափոխական ցույց կուտա, թեև ուրիշ տեղ զինքն իրրե գլուղ չարչի ե իրրե ճարպիկ սպեկուլյանտ կը հանաչեն ե թեև ատենոր 3 ամիս սուգ պահած ե թի-

վարիչներուն» դալուն համար: Անցած որ զինքը հնէն ճանհցող որիորդի մը ոճիքեն կախ եր ընկել Յերկանյանը ե կը շարշարեր խեղճ որիորդին, թե «թիւ իրավունք ունիս իմ առեւտրական ըլլալս հոս տարածելու, յերբ հոս զիս իրրե կոմունիստ մը, իրրե նվիրված գործիչ մը ճանչցուցեր եմ»:

Համա ինչ ե ե, խոսքը մեր մեջ մնա, մարդը կտոր մը հաց գտած կուտե: Միայն կուզեյինք այսքանն ըսել, փոխանակ Յերկանյանին դպրոցական կամ ուրիշ գործ մը տալու, անոր մասնադիտութեանն ի նկատի ունենալով՝ առեւտրական հիմնարկի մը մեջ աշխատեցնելս յի Յերկանյանը այն ատեն ալ կրնա շարունակել իր մենքասիրութիւնը. «մենք Բաթումն բերինք», «մենք Ժախեցինք», «մենք առինք, մենք տվինք» ե այլն, վորպիսի խոսքերին ան հիմա հեջ չի ախորժիլ:

ԹՂԹԱԿԻՅԸ

Տարինյանը հասարակական գործիչ մե գլուղական մասշտաբով: Որական անպատճառ թղթակցութիւն մը գրելու սկզբունք ունի նա. յեթ գրելու վոչինչ չուենա, յերկակցութեանը զոռ կուտա, առանց գործը տեղնուտեղը տեսնելու կամ լավազույն դեպքում փողոցում հանդիպած մարդուն ասած կցկտուր ե անպաշտոն տեղեկութիւններուն վրա հիմնվելով, կը գրե հերթական թղթակցութիւնը: Ուստի դարմանալու չե, յեթ Տարինյանն այսոր մածունին սիպտակ ըսե, վաղն ալ յինն ու սե ըսել Մենյակին մեջ փախված կը յերկակցի, վար ուսյոնիս մեջ ծխախոտի տնկման կամպանիան դեռ վերջացած չե ե արքիմիդյան վողեորութեամբ կնատի թղթակցութիւն մը գրել՝ «ծխախոտի տնկման աշխատանքը թույլ ե ուսյոնիս կոխողներու մովերնագրով: Թղթակցութիւնը պոչալին հանձնելուց հետո միայն պատահաբար» կրմանա, վոր ծխախոտի տնկման կամպանիան որ առաջ արդեն վերջացած ե: Եթե տեղվույս պատասխանատու գործիչներն մեկուն բլա-

բակրառիցմը խարաղանեթերթին հաջորդ համարին մեջ Տա-
րինյանը գովասանական ներքող մը կը նվիրե այդ մարդուն՝
Յեվ այսպես ան շարունակ կը թղթակցի, սակայն ընթերցող-
ները պոլեմիկները քարին տալով, կը մտածեն, թե սխալապէս
կամ Տարինյանի հերոս պատասխանատու գործիչը շարաթիւ
վոր որերը «բոլորովորաւ ե» և վոր որերը «ուղղակի հրա-
շարի աշխատող»։ Յեթե Տարինյանը փոխանակ քանակի
հետեից ընկնելու, վորակին գարկ աւար, այն առեւն հակա-
սություններին մեջ չեւ ընկնել, մածուը միշտ սպիտակ կը
մնար, ընթերցողը շփոթության մեջ չեւ մնար։

«По советски»

Զատիկի որ ե. մեծ իրարանցում կա Շ... գլուղում Տա-
հավթակելով ե. դարմանալին այն ե, վոր միաժամանակ լըս
վում ե «По советски» բացականչությունը, կարծելով թե
«խալ կը լսեմ, ավելի մոտ կը գնամ խմբի մը, ուր ամենեւ
շատ կը յեռա հավթակելովը «Դո, գարկ по советски»,
«Տուր ետեղ հավթիթը, չե՞ վոր «по советски» կովեցրինք
և այլ նման բացականչություններ, հավթակելով և... «по сове-
тски», չեմ կարողանում ինձ հաշիվ տալ, սակայն քիչ հետո արդեն
պարզվում ե ամեն բան տարիներ առաջ ում հավթիթը կը կոտրեր
գլխացիներ հավթիթը, կը վերցնէր հաղթվողի հավթիթը, սակայն
դա հիմա շահադրծում կը համարվի հոկտեմբերի 13-րդ տա-
րեգարձին, հավթակելով որեւէ քը փոխվում ե և հաղթող ձուռ
անցնում ե հաղթվողին։ Ահա «по советски»-ն ինչ հրա-
շարի լիգեա, չե՞ Յեվ այդ որը «по советски»-ն լավում ե
միայն հավթակելով մեջ։ Վաչ դպրոցում, վոչ կոմսոմոնների
մեջ և վոչ մի տեղ չի յերևում իսկական по советски»-ն։
Որվա հերոս՝ Տեր Պետրոսը իր գերին մեջ ե, քայլ անգամ
չի նահանջել իր դիրքից, կոմսոմոն ընտանիքներ, կիներ և
քուրեր իր թխին տակ են, քանի քանիսնեքին նա ճաշակ ե
սվել։ Առաւոտից մինչև յերեկո վոտքի վրա յե «խեղճը»

վոչ շրթունքներն են հանգստանում, վոչ, գրպանները։
Ամեն մի հողաթումբ-դերեղման մի պտղատու ծառ ե Տեր
Պետրոսի համար, իսկ ամեն մի մեռելատե՛ր մի կթան կով։
Յեվ նա իր հոռնձն անում ե հավթակելով «по советски»
բացականչությունների տակ։

ՍԵՋԱՆԱՅԻՆ ՊԻԵՏԻԿՈՍՆԵՐ

Կարդ մը մարդիկ, վորոնք միայն քաղաքական կարևոր
գեպը մը պատահած առեւն կը սկսեն քաղաքականությամբ
զբաղվել, պարզապես սեղոնային պոլիտիկոսներ կոչված են
իմ կողմից։ Պարզեմ, յեթե Անդրիայի հետ մեր առևտրական
հարաբերությունները խզվին, կամ Ֆրանսացիք մեր դի-
վանագիտական ներկայացուցչի գլխագիծը չհավանեն և
կամ Հոովմի պապը խաչակրաց արշավանք հայտարարե թոր-
հրդային Միության գեմ, այդ որերը թերթերը կրկնապատիկ
կը աղաւվին... բողաբում։ Ամբողջ առևտրական շարքը լրա-
գրավածառի վրա յեն հարածակվում, վորպեսզի բոլոր մը
առաջ կարգան սա «կարևոր» լուրը։ Քիչ հետո բազարի մի
ծայրից մյուսը տաք գրույց մը կը սկսվի «միջազգային քա-
ղաքականության» շուրջ, մեկը խորհ. իշխանության «մո-
տալուտ վախճան» և գուշակում, մի ուրիշը «հոգեառ» ֆին-
գործակալներին աղաւվելու հեռանկարն ե մատնանշում և
այլն և այլն։ Յեվ այսպէս, մարդիկ, վոր ուրիշ առեւն մի
զրոշ անգամ չեն տալ լրագրի և իրենց քաղաքականությու-
նից գուրս կը հայտարարեն, այդ որերը միմիայն քաղաքա-
կան առևտրով են զբաղվում։

— Ե՛հ, վարժապետ, կուգան կոր—կըսե մաւաճառ
Սպասողյանը, այնպիսի գեմքով, վոր կասես հենց նոր հե-
ռագիր ե ստացել Նիւանգիլից կամ Դենիկիկից։

— Ո՞վքեր են յեկողները, կը հարցնեմ Սպասողյանին
պաղարկունությամբ մը, վոր ըզգալ կտա մաւաճառին, թե
իր «բարի լուրը» հարկ յեղած ընդունելությունը չգտավ։
Սպասողյանն անմիջապէս ուղղում ե իր «սխալը» և ավելաց-
նում։

— Հարյուր հատ Կարաչայի վոլխար ամենաընտիր տեսակից

Մտնում եմ ծանոթ սափրիչի մը խանութը. այստեղ ել նյութը «ընթացիկ մոմենտն է»։ Եթե ինչու հետ միասին աշխատում ես և սափրիչի... բերանը։

— Միայն, ամեն ինչ մաշվում ե, փոխարինվում ե. որինակ, սա ածելին քանի մը տարի հետո կանաչափայլաւ և ուրիշ ածելի մը կը հաջորդէ անոր. այսպէս ել պետական կարգերն են. մեկը հնանալուն պես միւրիշը կ'աջորդէ (Հրաշալի համեմատութիւն, սափրիչային փոխփոխութիւն)։

Սափրիչի հետադա խոսակցութիւնները լսելու չեմ կրնար կենտրոնանալ, վորովհետեւ կը վախնամ, թե այնքան կը վողկորվի իր ճառախոսութեամբ, վոր ածելին ազատութիւն կտա և կ'սկսէ կրկարի։ Սափրիչից մի կերպ գլուխս կաղտտիմ և խանութից դուրս գալուն պես կը հանդիպիմ հաշվապահ Չեղոքյանին, վոր ըսով չի սիրել քաղաքականութեան վրա խոսել բայց Չեղոքյանի առաջին խոսքը լինում է՝

— Վարժապետ, «ասոնց» գործը վատ կերեւաւ. պատեալաբար անխուսափելի յե, իսկ հետեանքը խորն. իշխանութեան տապալումը կը լինի։

Հազիվ ե հաջողվում ինձ համոզել Չեղոքյանին, վոր մեր (և վոչ թե «ասոնց») գործերը շատ լավ են և կարծածին չափ վտանգ չի սպառնում խորն. իշխանութեան Չեղոքյանից բաժանվելուց հետո շտապում եմ տուն վերադառնալ։ Բանի մը որ անցնելուց հետո քաղաքականութիւնը մոռացվում ե բազարում։ Վոչ Սպասողյանը «յեկողները» (այսինքն վոլխարների) գալն ե ավետում, վոչ Սափրիչը ածելու մաշվելն ե մասնանշում և վոչ ել Չեղոքյանը «ասոնց» գործի վատ լինելն ե ակնարկում։

ԶԱՎԸ

Սոլիկյանը կոչումով ասում են բանաստեղծ ե, բայց վերջերս մուսան՝ իրեն խռոված ըլլալուն համար, սկսել ե ուշ ուշ այցելել, կամ ընով չայցելել։ Սոլիկյանը կուտուրական հիմնարկի մը (ակումբի) վարիչ ե։ Զավ ե, զավ են անվանում նրան։ Յեվ նա միշտ աշխատում ե դրսևորել «դավային» բյուրոկրատիկ ձևեր։

Յեթե ակումբում «Կարմիր խաչի» ոգտին ներկայացում ինի, նույն որը ակումբի բուֆետը կը հանձնի մասնավորի մը, առարկելով թե՛ «կուղե կարմիր ըլլա, կուղե ձերմակ, թող դրամ տա, ով կուղի թող լինի»։

Զծխելու մասին հայտարարութիւնն անելիս անպատճառ զրանալը Սոլիկյանի բերնին կը լինի։ «Քաղաքացիներ, նստարաններու հենակներուն վրա միք նստի» կը պոռա Սոլիկյանը, մինչդեռ ինքը դեռ այդ խոսքերը բերանին, կը նստի հենակին վրա և կը ցեխոտի նստարանը։ Դուրս ե գալիս, վոր չծխելը ե նստարանները չցեխոտելը միմիայն հասարակ մահկանացուների համար ե և բոլորովին չվերաբերիր Զավին։ Սոլիկյան այն կարծիքին ե, վոր ինքը ինչ ուղե կրնա ընել և վոչ վոք իրավունք չունի նրա անձնականութիւնը խճճելու։ Կող չե, թե ան իր պարտականութիւններին մեջ թերանում ե, ակումբի կուտուրական կյանքը յերեսի վրա յե մնում։ Սոլիկյանը, վորպէս զավ, թյուրիմացութիւն ե, վոչ ազիլ, վոչ պակաս։

ԴԺԳՈՂՅԱՆԸ

Դժգոհյանը այնպիսի մը կապրի, վոր իր գոյութիւնը չի նկատվի, հասարակութեան պատիվ մեկ անգամը կը համարվի նա, յեթե աչքի առաջ չառնենք Դժգոհյանի յերբեմնի հայտ բերած ակտիվութիւնը... հակախորհրդային ասեկոսներին ընադավառում։ Թեթե անտեսական դժվարութիւն մը կամ մանրուք դրամի «սակավութիւնը» բավական են,

Վոր Դժգոհյանը բերանը արշին մը բացած, յոթներորդ յերկինքը հասցնի իր դժգոհութեան ձայնը:

— Ախպար—կը սկսի Դժգոհյանը՝ հացի հերթին կանգնած, յերբ կը տեսնե բավական թվով պառավներ հավաքված իր շուրջը և նպատակահարմար կը համարի սկսել իր հերթական «միթինկը»—ամեն բան կը քաշվի, բայց սա մանրուքի բելան քաշվելիք բան չե. չեմ գիտեր, թե ինչու կառավարութեանը կը հավաքե աղոնք: Պառավները հավանական շարժումներ կընեն. վոչ վոքի մաքից չի անցնիր, վոր այդ իսկ ըսելիքին քաղաքացի Դժգոհյանի մոտ ամենաքիչը յերեք ռուբլու մանրութե կա (տանը ունեցածը իրա հերթին), մինչդեռ Դժգոհյանը հացի գրքուց կին հետ թղթադրամ մը ունի ձեռքին ոռնած:

Մանրութի հարցը փակված համարելով, Դժգոհյանը կանցնի կենսամթերքների սակավութեան խնդրին:

— Ասանկ ապրուստ կըլլա. մարդ իր տունը ֆուստ մը յուղ չունենամ, աս ինչ դարու հասանք, աղպար, քիչ կը մնա անոթի մեռնինք—և վոգետոված կը սկսի քննադատել «ստոնց» կարգ ու կանոնը:

Ծանոթե մը պատահաբար կիմանամ, վոր դեռ յերեկ Դժգոհյանը ինչ վոր կասկածելի միջոցներով 5-6 քիլո յուղ ձեռք ձգած ե և յուղի մեջ կը լողա Կենսամթերքներու հարցին հաջորդեց կոշկեղենը: Դժգոհյանը, վոր մեկ վոտքին հին մաշիկ մը ունեւ, իսկ մյուս վոտքին մաշված կոշիկ մը՝ «արդարացի» կերպով իր դայրութեւն եր հայտնուս «կոշկեղենի պակասութեան» համար, բարձրացնելով հաջորդաբար աջ և ձախ վոտքը, վորպէս ապացուց իր ասածներէ: Վոչ վոք չգիտե անշուշտ, վոր Դժգոհյանի անկողնու տակ անգործութեան մատնված մի զույգ ամառային և մի զույգ ձմեռային կոշիկները ալելի ուժեղ ապացուց ելին «խեղճ» Դժգոհյանի «արգարացի» դայրութին:

ՂՅԱՓԷ*)

Մեծ պատուհաս եր են տարին Կ... գյուղի համար դաժիք, վոր սովորականեն ավելի կը հարձակվեր հավաքներէ վրա և կը սպառնար վոչնչացնել գյուղի ամբողջ հավերը. որ չեւ անցնիլ, վոր դայիք քանի մը հավ չփախցնեւ գյուղին Կ... գյուղի բնակիչների հավային պատուհասը կրկնակի յեր են տարին, քանի վոր բացի չորքոտանի դայիներեն յերկոտանի դայի մալ իր վորսը կընեւ Կ... գյուղի հավերից: Յերկոտանի «Ղյափը» դա գյուղի քահանա՝ Գլուսմայան եր: Գլուսմայան տանը, ծննդյան, թաղման կամ պսակի ծխակառարութեան համար Տեր Գլուսմայանը ամեն մի ծխակառարութենեն վերջը, բացի սահմանված դրամեն, հատ մըն ալ հավ «նվեր» ստանալու «համեստ» սովորութեանն ունեւ, վորին յերեք չեւ դավաճանեւ: Կ... գյուղում սովորական դայի հետ գրեթե միշտ կը հիշվեւ և «Ղյափ»-Գլուսմայանը: — Տղերք, տեսեք, «Ղյափը» հավ ե տանուս, կը պոռային փոքրիկ տղաները, յերբ Տեր-Գլուսմայանը հավ մը թէին տակ մեռելատնե մը կամ հարսանքատնե մը կեդնեւ: Ծնորհիվ տեգական վորսորդներու աշաղուրջ հսկողութեան, դայիները Կ... գյուղից քշվեցին, շատերը մորթաղերմ յեղան: Սակայն «Ղյափը» դեռ կը շարունակեւ իր վորսը: Գլուսմայանը դեռ կը շարունակեւ ամեն տնե հավ մը կընէ իր տունը, ինչպէս իսկական դայի մը՝ իր վորջը: Գլուսմայանի աստղը թեքվեց միայն այն ժամանակ, յերբ Կ... գյուղը կոլխոզ դարձավ: Կոլխոզնիկները կամաց կամաց գիտակցեցին կրոնի անմոռութեանը. շատերի տների դուռը փակվեց Տեր-Գլուսմայանի առաջ. հավերը ապատվեցին անոր հարձակումներեն: Յերկորդ բոլշեիկյան զարնանացանի պլանն ընդունելու ատեն «Վեքելը» կոլխոզի (Կ... գյուղ) կոլխոզնիկները միաձայն վորոշեցին գյուղի յեկեղեցին վերածել աղուսի և «Ղյափ» Գլուսմայանի ել քշել իրենց կոլխոզի սահմաններեն:

*Ղյափ—չախկալ (шакал)

ՄԿԻՐԱՅՅԱՆ

Մկրատյանը պատահաբար ժանկավարժական ասպարեզն ընկած մարդ մըն է, դասարանին սեջ ան ամեն ինչ է բացի մանկավարժի: Կը կարծեք թե ան համապատասխան էրթություն մը չունի, քով լիցի, մարդը կատարյալ միջնակարգ կրթության տեր է: Բայց, վոր մանկավարժութենէ բոքիկ է, այդ մեկը հա: Մկրատյանն ատենոք կը խորշեր «վարժապետ» անունը լսած ատեն, բայց ով գիտե ինչ ինչ անհաջողություններ պատճառ դարձած են իրեն «ճգնելու» վաճառքարժական ասպարիզում հետ ընկած գյուղ մը, վորտեղ ան զուրկ է քաղաքում ունեցած կարգ մը հարմարություններէ: Մկրատյանը սակայն կամաց կամաց կը ջանար հարմարվիլ նոր միջավայրին, մի կերպ յորտ տանել, սակայն «գոթախտությունը» կը հետապնդի իրեն: Կոլխոզարժման ակիքը կը տարածվի Մկրատյանի պաշտոնավարած գյուղը: քաղաքից յեկած բանվորները ժողով կը գումարեն և կը խոսեն կոլխոզ կազմելու, կոլեկտիվ աշխատանքի անցնելու: Մկրատյանը հարկից ստիպված քանի մը խոսք կը շտայն կոլխոզարժման մասին. «Հենց վոր ուսումնական տարին վերջանա, անմիջապես կը կշվեմ» մտածելով Մկրատյանը կը համոզե գյուղացիները կոլխոզ կազմելու: Գյուղացիները մեկ մեկ վրա կուտան իրենց ազգանունները, նորակազմ կոլխոզին անդամագրվելու: Քաղաքից յեկած բանվորներն մեկը, վոր կը ցուցակագրեր, կը դիմե ընկ. Մկրատյանին, վերջինիս նույնպես անդամագրելու: Մկրատյանը կը շարունակե անակնկալ առաջարկի մը առաջ և ակզբում պրոֆմիության շարքերեն դուրս գալ չուզելը կը պատճառաբանե, այնուհետե կարգ մը «ոքսիկտիվ» պատճառներ յերևան կը բերե, վորոնք քաղաքից յեկած ընկերոջ հողմն անհիմն կը հայտարարվին: Մկրատյանը հարձակման կը դիմե և «յերաբայր, կը պողա, գիծ խոչն, յես կարծիք եմ կոլխոզ մասին և կապված ֆեալ ախտեղ. ետք եզուց յես ա-

տամներս շինել եմ տալու, թե կոլխոզ մտնեմ, ել վորտեղից հնարավորություն կունենամ այդ անելու»: Քաղաքից յեկած ընկերը հարցը փակված կը համարե և ավելորդ կը համարե խոսք ավելցնելը: Մկրատյանը խոսքին տերը կը գտնվի. ուսումնական տարին վերջանալուն պես կը չվե, սակայն չնայած վոր նա կոլխոզի անդամ չէ, բայց մինչև այժմ դեռ ես ատամները շինել տված չե:

ԲԱՐԵԿԱՍՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԲԸ

«Հարյուր մանիթ ունենալու տեղ հարյուր բարեկամ ունեցիր» կըսե ուսական առածը: Ներկայիս մեջ ~~...~~ հերթից դուրս ապրանք ստանալու համար հարյուրի կարիք չի զգացվիր. բավական է ունենալ բարեկամ մը կոոպերատիվի խանութում: Յեթե խանութին մեջ ծանոթ բարեկամ մը չունիս, սպասե, վոր հերթը հասնի քեզ, անտլ յեթե ապրանքը չվերջանա ու ստանալու հասանելիք բաժինդ. խոյ յեթե խանութի վարիչը ծանոթ է, նու ըսենք քեռուդ տղեն է կամ հորեղբորդ փեսան, հերթը է ըսես զբարեկամի. Արամ, սապա եք տալիս» և անա անմիջապես գրքույկդ կը խլվի, համապատասխան տալուն կը պոկվի և սաղոնն արդեն զամբյուղիդ մեջ կը լինի: Ինարկե ուշադրություն չես դարձնե հերթում կանգնածների դժգոհության աղաղակներին և անմիջապես խանութեն դուրս կը ծլվվի: Վորքան ճարպիկ զըլա բարեկամդ, այնքան յերկարատե կըլլա բաղդավորությունդ, սակայն անվերջ չըլլար, վորովհետե որ մը չէ որ մը բարեկամիդ հոն չես գտնիր: պաշտոնանկ արված կըլլա իր սխրագործություններու» համար:

«ՊԱՇՏՈՆՍ Ե ԽՈՄՓԱԼ»...

Կոլիկյանը պաշտոնով ուսուցիչ է. իբրե մանկավարժ չե՛, վոր պիտի նկարագրենք ղինքը, այլ իբրե «որինակելի» վարմունքի տեր անձնավորություն մը: Կոլիկյանին լավ կը

ճանաչեն քաղաքիս մեջ գինեատուներեն սկսած մինչև քաղաքիս... կանաչականները, վորտեղ ան հաճախ կը տեսնվի՝ գինեատան մեջ ստացած հերթական «նազրուզկայի» ծանուցման տակ: Հաճախ կայցելի «Ալլանվերդի» ճաշարանը, ուր վողեւից Լմպելիների շարք մը իրար հետ կը մրցեն: Լոլիկյանը բաժակակից մը դտնելուն պես իր «սպասվամբը» տեղը կը դրավն ճաշարանին մեկ անկյունը և ահա մեկ ակնթարթի մեջ վողեւից Լմպելիների շքերը զորքերի նման կը շարվին սեղանի վրա: Մինչդեռ անդին ուսուցիչները գլուխները քաբին կտան «նոր մեթոդն» յուրացնելու, «կոմպլեկսի», «պրոյեկտի» մեթոդին տիրապետելու, այստեղ, «Ալլանվերդու» գինեհոս մթնոլորդին մեջ, գինու շքերուն մեջ Լոլիկյանը կը գտնեն ամեն ինչ:

— Խմե, աղպարս, խմե—կը պոռա իր բաժակակցին— «կոմպլեկսն» ալ, «պրոյեկտն» ալ ասոր մեջն են. «տուտուց կըլի քեֆ չանողը, կարմիր գինի չխմողը» կալիցնե, ավելի ճիշտը կեղանակե Սոլիկյանը, վոր այդ պահուն բոլորին ուշադրութունը կը գրավե, Հետեանքը, նորեն կանաչականները, իսկ առավոտյան գլխապտույտ՝ դասարանում: Սոլիկյանը վերջերս մեր քաղաքին հեռացեր է, վորովհետեւ իր «Ալլանվերդին» փակված է և բացի այդ՝ խաղողին բերքը սպասածեն ցածր է շրջանիս մեջ: Քաղաքիս գինեատուները, վորոնք՝ «Ալլանվերդու» փակվելին վերջը Սոլիկյանին իրենց հաճախորդներու ցուցակն եյին անցկացրել, մեծ սուգի մեջ են Սոլիկյանի հեռանալովը, վորովհետեւ վարժապետի ուձկի մը չափ բաց կը նախատեսեն իրենց հաշվեկշռուն մեջ:

II.

ՄԻ ՈՐՈՎ ՏԱՆՏԻԿԻՆ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՅՈՒԱԿ.—պետական ծառայող,
ԱՆՆԻԿ.—նրա կինը.
ՌՈՒԲԵՆ.—Յուակի ընկերը
ՉԱԲԵՆ.—Աննիկի ընկերուհին:

Անցք պատահում է Յուակի սանք, մարտի 8-ին:

(Բեմի վրա յերեսայի ոտոց)

ՏԵՍԻՆ Ա.

ՅՈՒԱԿ.—Այսոր հանգստի որ է ինձ համար բառի բուն իմաստով. վոչ մի ժողով չի նշանակված, հասարակական վոչ մի աշխատանք չունեմ: Մի բոլ գաղետ կը կարդամ, մի քիչ կը քնեմ, հետո կը գա Ռուբենը և շախմատ կը խաղանք. այնուհետեւ դուրս կգանք մաքուր ուղեւ դրոսներու: (Սեղանի վրայից վերցնելով մի գրութուն, կարդում է մեկում): Ոհո, այ քեզ հանգիստ. (կարդում է բարձր) «Աննիկ, ուղիղ ժամը 10-ին յեղիր նացմեն սկումբի մոտ՝ շքերթին մասնակցելու համար. բոլորովին մոռացել եյի, վոր այսոր մարտի 8-ն է: Աննիկը կգնա շքերթին միանալու, այնուհետեւ ներկա կլինի կանանց հանդիսավոր նիստին և հետո կամ թատրոն կգնա, կամ կինո, մի խոսքով, առավոտից մինչև կես գիշեր տանը չի լինի Դեհ, թե կարող ես հանգըստացիր: Չե, պետք է փախչել, քանի Աննիկն ինձ չի տեսել: (Ուզում է դուրս գնալ, մեկում է ԱՆՆԻԿը):

ՏԵՍԻՆ Բ.

ԱՆՆԻԿ.— Յուակ, ինչ լավ է, վոր դու յեկար. յես այսոր ամբողջ որը տանը չեմ լինի. հրաշալի դուզադիպությամբ այսոր քո հանգստի որն է և դու ամբողջ որը տանը կլինես, կերակուրը կեփես և յերեսային կը նայես:

ՅՈՒԱԿ.— Բայց յես կարենոր գործով մի տեղ եմ գնա-
լու:

ԱՆՆԻԿ.— Գիտեմ քո «կարենոր գործը». ինչ խելոքն ես.
ուզում ես փախչել, ելի: Դո՛ւ եղ գործը դիջիր հանուն բան-
վորուհիներին միջազգային որվան: Դեհ, յես ուշացա. յերե-
խային լավ նայիր. 3 ժամը մի անգամ կերակրիր. կաթերը
պատրաստել եմ և խոհանոցում դրել: Յերեխայի տակը թաց
մի թողնի, շուտ-շուտ փոխիր:

ՅՈՒԱԿ.— (Դիլիսի հուսառատ հեռանալով և անում)

ԱՆՆԻԿ.— Կերակուրի տակը չայրես, աղը ձգելը մի
մոռանա: Ցտեսություն, յես գնացի (Գնում է):

ՏԵՍԻԼ Գ.

ՅՈՒԱԿ.— Հարյուր տոկոսով նադրուկա, փոխանակ լիակա-
տար հանգստի: Նախ և առաջ զրի առնեմ իմ այսորվա ման-
կիքները, թե՛ չե մի բան կը մոռանամ և աշխատանքիս ըն-
թացքում ճեղքվածք կառաջանա: (Դուռն է յեղ կարգում)
«յերեխային կերակրել, կերակուրը յեփել, սենյակը կարգի
բերել, ջրհորից ջուր քաշել, յերեխայի տակը մաքրել, ձեռ-
քերս լվանալ, կերակուրի համը նայել և աղը ձգել, յերե-
խային դարձյալ կերակրել, ճաշել և ամանները լվանալ»: Զսկայական անելիքներ ունեմ յես. հայտարարում եմ ինձ
հարվածային և անցնում եմ գործի: (Ասքը բերում է յեղ
ձալիս յերեխային) ծրագրի առաջին կետը հաջողությամբ
իրագործեցի, անցնեմ յերկրորդ կետին (գնում է դուռն յեղ իս-
կույն վերադառնում): Յերկրորդ կետը ինքնիրեն վերջացած
կարելի չե համարել, վարովհետև մինչև իմ ծրագիր կազմե-
լը յեփվելով կերակրի ջուրը քաշված եր. բայց վո-
չինչ. յես նոր ջուր ավելացրի և կրակը թեփացրի: Այս կե-
տում շատ շատ վորակի իջեցում կը ստացվի 30-40 տոկոս՝
բյուրեղատիպի պատճառով: Այժմ սենյակը կարգի բերեմ.
(յերգելով):

Մարտի ութն է. մեր Աննիկի

Ամուսինն է տանը տիկին.

Յուակին հանգստի որը

Նադրուկայով աշխատեցրին:

Մեր Աննիկը ժողով գնաց,

Յուակը տանտիկին մնաց.

Գաղետի շախմատի տեղը

Ավելի պոչիցն է բռնած:

Այս ել վերջացավ: Զրհորից ջուր քաշելու վաղեմ, քանի

յերեխան լաց չի յեղել (գնում է. յերեխան լաց է լինում.

Յուակը յեղապատառ մերս է մեմում): Յերեկի ժամանակ է

անցնելու ծրագրի համապատասխան կեան իրագործելու.

(սկսում է յերեխայի բակը մաքրել՝ զգվելով) ծրագրի առաջին

դժվար կետն էլ առանց քարոզության վերջացավ: Այժմ

ձեռքերս լվանալ և անցնեմ խոհանոց: (Դուռն է գնում.

յերեխան ճյուղ է. Յուակը վերադառնում է ձեռքերը սրբելով)

հաղիվ ձեռքերս լվացի. խոհանոց չկարողացա գնալ. չգիտեմ

ինչ անեմ. կարծես աշխատանքիս ընթացքում ճեղքվածք է

առաջանալու. ավելի ճիշտը մոլ թե՛ ճեղքվածք, այլ պար-

զապես այրվածք. այսինքն յերեխային հանգստացնելիս

այնտեղ կերակրի տակը պիտի այրվի. դո՛ւն համը նայած

ու աղը ձգած ինքնի (յերեխային գրկած հանգստացնում է):

ՏԵՍԻԼ Գ.

ՌՈՒԲԵՆ.— (մերս մեմելով) Բարե, Յուակ:

ՅՈՒԱԿ.— Ռուբեն ջան, հենց աղբես, մի բոպե զրկիր

այս յերեխային, թե՛ չե, ճեղքվածք է առաջանալու: (Ռուբենը

գրկում է յերեխային. Յուակը դուռն է գնում):


ՌՈՒԲԵՆ.— Բավականին տարորինակ յերեխայի. վոչինչ

չեմ հասկանում. ինչ ճեղքվածքի մասին է խոսքը:

ՅՈՒԱԿ.— (մերս մեմելով) Զրհորի այս կետն էլ հաջո-

ղությամբ ավարտված: Մեծնեղություն, քո ակտիվ մասնակ-

ցությամբ (վերցնում է յերեխային):



ՌՈՒԲԵՆ.— Յեղբայր, մարդավարի բացառիկը, թե ինչ
հեղքվածք ե, ինչ ծրագրի կեսս ե և ինչ ակտիվ մասնակ-
ցություն ե իմ կողմից:

ՅՈՒՍԿ.— (հրճմբ սրբելով յեղ յեղեխամ ոտոտցի մեջ
դձելով) Ընկեր Ռուբեն, Աննիկն այսօր տանը չե, իսկ յես
թարսի պես տանն եմ, վերովհետև հանգստի ողս ե. մի
խոսքով՝ այսօր յես տանտիկին եմ և հետևաբար հակադրական
անելիքներ ունեմ: Ահա դրանց ծրագիրը, վերի յոթերորդ
կետը չալտի կարողանայի առանց քո ոգնության կատա-
րել, վերովհետև չալտի կարողանայի յերեխային մենակ
թողնել և խոհանոց դնալ:

ՌՈՒԲԵՆ.— Ուրեմն տնային աշխատանքի մի ուրը այդ-
պես նեղն ե ձգել քեզ. հապա խեղճ կանայք ինչ անեն,
վոր տարին տասներկու ամիս իրենց քաջածն այդ ե:

ՅՈՒՍԿ.— Ռուբեն, իսկապես վոր կանանց դործը չա-
փազանց դժվար ե, լավ վոր մարտի 8-ը տարին մի ունգամ
ե գալիս, թե չե...

ՌՈՒԲԵՆ.— Յուրակ, ընդհակառակը, պետք ե տյնպես
անել, վոր ամեն ուր մարտի 8-ը լինի կանանց համար:

ՅՈՒՍԿ.— Ինչ ես ասում Ռուբեն, ինձ սադ սադ մոր-
թելու յես, ինչ ե:

ՌՈՒԲԵՆ.— Դու ինձ չհասկացար. պետք ե կանանց
ազատել խոհանոցի աշխատանքից և յերեխա խնամելու
հոգսից. դրա համար պետք ե հիմնել մանկապարտեզներ,
մսուրներ և ընդհանուր ճաշարաններ:

ՅՈՒՍԿ.— Դա ուրիշ բան ե. թե՛ չե, ասիպելին աղա-
մարդկանց՝ կանանց դործն անել ամեն ուր, դա ինչի՞ նը-
ման կլինի:

ՌՈՒԲԵՆ.— Քաղաքներում մենք ունենք մանկամսուր-
ներ, թեպետ նրանք չեն ընդգրկում բոլոր յերեխաներին.
քայց շատ կոլխոզներում վոչ մսուրներ կան, վոչ մանկա-
պարտեզներ. իսկ ընդհանուր փուռի կամ խոհանոցի մասին

մոտծող ել չկա: Մինչդեռ այս պատճառով հարյուրավոր
կանայք կոլխոզներում արտադրությունից կտրված են:

ՅՈՒՍԿ.— Յեթե այդ կոլխոզների վարչության ան-
գամներին, մանավանդ նախագահներին մի ուր ինձ նման
տանտիկնություն անել տային, ամենակարճ ժամանակում
թե մսուրը, թե փուռը պատրաստ կը լինելին:

ՌՈՒԲԵՆ.— Յուրակ, հանաքը մի կողմ. պետք ե աշխա-
տել այդ ուղղությամբ:

ՅՈՒՍԿ.— Ռուբեն, խոսք եմ տալիս, եղուցվանից յես
կտնցնեմ դործի: Կզնամ «Կարմիր Հոկտեմբեր» կոլխոզը և
ամեն կերպ կաջակցեմ մանկամսուրի գործը գլուխ բերելուն:

ՌՈՒԲԵՆ.— Իսկ յես կաշխատեմ այստեղ՝ մեր հիմնար-
կության կից մի մանկական հրապարակ հիմնելու:

ՏԵՍԻՆ ՅԵ

ԱՆՆԻԿ և ԶԱԲԵԼ.— Բարե ձեզ:

ՅՈՒՍԿ.— Յեկե՛ր վերջապես. Աննիկ, այսօրվա իմ
տանտիկնությունը մեծապես նպաստեց կանանց դործին:

ԱՆՆԻԿ.— Յուրակ, չեմ հասկանում. թող քո հեզնանքը:

ՅՈՒՍԿ.— Բոլորովին հեզնանք չե. յես և ընկեր Ռու-
բենը պիտի աշխատենք, վոր ամեն ուր մարտի 8-ը լինի
քեզ և քեզ նմանների համար:

ԶԱԲԵԼ.— Ընկեր Յուրակ, չափազանց հետաքրքիր եք
խոսում:

ՅՈՒՍԿ.— Բայց վոչ ամեն ուր տանտիկնություն՝ ինձ
ու ինձ նմանների համար:

ԱՆՆԻԿ և ԶԱԲԵԼ.— Վոչինչ չենք հասկանում:

ՌՈՒԲԵՆ.— Ընկեր Յուրակ ուզում ե ասել, վոր մի ուր
տանտիկնություն անելով, հարյուր տոկոսով դիտակցեց կա-
նանց աշխատանքի ծանրությունը, ուստի խոսք տվեց
եղուցվանից աշխատել բանվորական թաղամասերում
և մանավանդ կոլխոզներում մսուր, մանկապարտեզ, ընդ-
հանուր փուռ և խոհանոց բանալու ուղղությամբ աշխատեցիտ
տանկելու:

ՏՈՒՄԿ.— Հիմի հո հասկացածք. քեզներդ յեկավ չե՛ր:

ԱՆՆԻԿ.— Վո ինչ, Աննիկ. գոնե այսուհետև աշխատեն աշխատեցանք: Ասում են՝ «Եկավ և ուշ, քան յերբեք»:

ՌՈՒԲԵՆ.— Հիմի յեկեք, մարտի 8-ի առթիվ մի յերգենք:

ԲՈՂՈՐԸ.— յերգենք (յերգում են).

Յեկեք, ուրեմն մենք աշխատենք,

Հին կենցաղը վերացնենք.

Նոր կենցաղով մենք մեր կանանց

Դրությունը լավացնենք:

Դրա համար քաղաքում մենք

Մանկամուտներ հիմնենք.

Մեր փոքրիկ յերեխաներին

Խնամելը նրանց հանձնենք:

Կոլխոզներում բանանք նույնպես

Մանկամուտը ու պարտեզ.

Ընդհանուր փուռ ու խոհանոց

Դրանք շատ են անհրաժեշտ:

Վոր մեր կանայք ազատ լինեն

Իրենց մաշոդ հոգսերին,

Միշտ ձեռք ձեռքի տված՝ մեզ հետ

Առաջ գնան, աշխատեն:

Ուրեմն զուգ, լուսաթվարներ,

Կոլխոզի վարչություններ,

Քաղաքներում, կոլխոզներում

Մանկամուտներ հիմնեք:

Մանկապարտեղներ հիմնեք:

Ответственный редактор
А. Г. Авакян
За технического редактора
Р. Тюзян

№ 1977
1931 года

Сд. в набор 22/XII—1931 г.
Сд. в печать 14/I—1932 г.
Объем 9/16 печ. листа
Тираж 3000 экз.

Крайлит № В 4777, Газетно-журнальная тип. СКРПО, Ростов-на-Дону, 1931 г. Формат Б6 125x176



ՀՀ Ազգային գրադարան



NL0339124

ԳԻՆԵ 10 ԳՈՂ.
Цена 10 коп.

25150



На армянском языке

К. ГАРУНИ

ЗНАТЬ НАШИХ ДНЕЙ

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԴԱՐԱՆ

ՔՈՍՏՈՎ-ԴՈՆ. ՄՈՍԿՈՎԱԿԱՆ ՓՈՂ., 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՅԵՆՏՐ)